նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում կիրառվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը: Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է նաև, որ սեփականության իրավունքը կարող է օտարվել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով:

Օրենքի նման վերնագրումով հանրության գերակա շահի ամրագրումը մի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է, իսկ մյուս կողմից պետության համար սահմանափակում է օտարված սեփականությունն այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը:

Հարկ եմ համարում նշել,որ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:Այս առնչությամբ ուշադրության է արժանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի **«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմանով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներով»**:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ նաև **«հասարակության և պետության»** բառերը Օրենքի ամբողջ շարադրանքում փոխարինել **«Հանրության գերակա շահ»** բառերով: